# **ԹԵՄԱՆԵՐ.** ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԻՎԻԶՄ

**Տևողություն.** 90 րոպե

**Նյութեր.**

նոթբուքեր, համապատասխան կայքերի և աղբյուրների հղումներ, տպագիր նյութեր, տեսանյութերի հղումներ կամ տեսողական սարքեր (պրոյեկտոր, էկրան), մարկերներ, թուղթ

**Տարիք.** 15+

**Համառոտ տեղեկատվություն առաջադրանքի վերաբերյալ.**

Առաջադրանքի միջոցով սովորողներն ավելի լայն պատկերացում կկազմեն Հայաստանի ժողովրդավարական գործընթացների մասին՝ վերլուծելով բանակում առկա մարդու իրավունքների խնդիրները և այդ խնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը և դրանց լուծմանն ուղղված քաղաքացիական ակտիվիզմի դրսևորումներն ու քաղաքացիական նախաձեռնությունները: Սովորողները կքննարկեն դեպի ժողովրդավարություն անցումը, ակտիվիզմը, մարդու իրավունքները և կգնահատեն, թե ինչպես է պատերազմն ազդել ու շարունակում է ազդել հայաստանյան հասարակության վրա:

**Հիմնական հարց.**

Ինչո՞ւ է ժողովրդավարական հասարակությունում ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունենալը կարևոր:

**Կրթական վերջնարդյունքներ**

Սովորողները կկարողանան.

— աշխատել ականատեսների վկայությունների և այլ առաջնային աղբյուրների հետ,
— տարբեր խնդիրների վերաբերյալ իրենց կարծիքը/դիրքորոշումը հիմնավորելու համար օգտագործել տարբեր աղբյուրներ,
— քննարկել մարդկանց ակտիվ քաղաքացի դարձնող հիմնարար արժեքները:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Քայլ 1. Մտագրոհ** (10 րոպե)

Այս գործողության նպատակը թեմայի հանդեպ հետաքրքրություն արթնացնելն է: Ուսուցիչը սովորողներին ցույց է տալիս ՀՀ Զինված ուժերում խաղաղ պայմաններում մահվան ելքով միջադեպերի վիճակագրությունը 1994 թ. սկսած (տես նաև Հավելված 1-ը): Նա նաև բացատրում է պատկերը թվերը: Սովորողներն այնուհետև պետք է պատասխանեն հետևյալ հարցերին.

— Ի՞նչ է ասում գծապատկերը:
— Ո՞րն է մահվան ելքով միջադեպերի ամենամեծ տոկոսը:
— Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:

**Քայլ 2. Ականատեսի ներկայացում** (5 րոպե)

Ուսուցիչը ներկայացնում է ականատեսին՝ հարցազրույցում տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև հարցազրույցին կից տեղեկատվության հիման վրա: Ուսուցիչը կարող է նաև տպել Հավելված 3-ը և այն տրամադրել սովորողներին:

**Քայլ 3. Հարցազրույցի հատվածի (0:28–6:13) դիտում և քննարկում** (10 րոպե)

Հատվածի դիտումից հետո ուսուցիչը մեկ առ մեկ քննարկման է ներկայացնում հետևյալ հարցերը (հարցերից յուրաքանչյուրը տպված է առանձին թղթի վրա և թղթերը հերթով են ցույց տրվում, ոչ թե միասին).

— Ինչո՞ւ է Լալան ընդգրկվել քաղաքացիական ակտիվիզմի մեջ:
— Ինչպե՞ս է դա կապված ժողովրդավարական անցման հետ:
— Ինչպե՞ս է Լալան սահմանում ակտիվիզմը:

**Քայլ 4. Հարցազրույցի հատվածի (8:18–11:14) դիտում և քննարկում** (5 րոպե)

Հատվածի դիտումից հետո ուսուցիչը քննարկման է ներկայացնում հետևյալ հարցը.

— Ինչո՞ւ է կարևոր քաղաքացիական ակտիվիզմը:

**Քայլ 5. Հարցազրույցի հատվածի (11:15–25:13) դիտում և քննարկում** (20 րոպե)

Հատվածի դիտումից հետո ուսուցիչը տալիս է հետևյալ հարցեր.

— Ովքե՞ր էին ներգրավված նախաձեռնության/շարժման մեջ:
— Ի՞նչ խնդիրներ էր բարձրացնում նախաձեռնությունը:
— Արդյո՞ք նրանք հաջողեցին այդ խնդիրները լուծելու գործում:
— Եթե այո՝ ինչպե՞ս:
— Ի՞նչ գործիքներ էին օգտագործում:
— Ի՞նչ կարողացան փոխել: Ի՞նչ է, որ դեռ լուծված չէ:

**Քայլ 6. Մտագրոհ** (10 րոպե)

Այս գործողության նպատակը որոշ հիմնական տեղեկություններ տրամադրելը և թեման մեր երեք հիմնական թեմաներին կապելն է: Ուսուցիչը մեկ առ մեկ հետևյալ հարցերն է տալիս սովորողներին և հարցերից յուրաքանչյուրի պատասխանները հավաքելուց հետո ցույց է տալիս Հավելված 2-ի համապատասխան սլայդն ու բացատրում այն:

**Հարց սլայդ 1-ի համար.** Ի՞նչ կապ ունի բանակը ապագաղութացման հետ:

**Հարց սլայդ 2-ի համար.** Ի՞նչ կապ կա ժողովրդագրության և բանակի միջև:
**Հարց սլայդ 3-ի համար:** Ո՞րն է ժողովրդավարության և բանակի կապը:

**Քայլ 7. Վերլուծություն և մեկնաբանություն** (30 րոպե)

Այս գործողության նպատակն է, որ սովորողները վերլուծեն և մեկնաբանեն հարցազրույցը հավելյալ աղբյուրներ կարդալուց հետո: Սովորողները բաժանվում են 3 խմբի: Ժամանակի մեջ տեղավորվելու համար ուսուցիչը կարող է ընտրել ստորև աղբյուրներից մեկը կամ երկուսը:

Խումբ 1-ը կարդում է Բանակն իրականում նախաձեռնության հետևյալ կոչերը կամ հայտարարությունները.

1. «Բանակն իրականում»-ը հարցնում է նախագահի թեկնածուներին
2. «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնության հայտարարությունը՝ Բանակի օրվա կապակցությամբ
3. «Բանակն իրականում» նախաձեռնության հայտարարությունը Մատաղիսի վերաբերյալ

Խումբ 2-ը կարդում է Մատաղիսի դեպքի վերաբերյալ հետևյալ հոդվածները.

1. https://hetq.am/hy/article/22078
2. https://hetq.am/hy/article/8839

Խումբ 3-ը կարդում է հետևյալ աղբյուրները.

1. https://www.7or.am/am/news/view/46291/
2. https://www.azatutyun.am/a/25246897.html
3. https://safesoldiers.am/595.html

Այնուհետև խմբերից յուրաքանչյուրը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝ հիմնվելով կարդացած լրացուցիչ նյութերի վրա.

— Որո՞ք էին Բանակն իրականում նախաձեռնության բարձրացրած հիմնական խնդիրները:
— Ի՞նչ գործիքներ էր օգտագործում նախաձեռնությունը:
— Ի՞նչ հաջողություններ են ունեցել:

## ԽՆԴԻՐ 1: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՅՑԵԼԵԼ SAFESOLDIERS.AM ԿԱՅՔԸ՝ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ/ՀԱՄԵՄԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ 2020–2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հայկական բանակում ոչ մարտական իրավիճակներում զոհերի թիվը**

1994 թ. (Առաջին Արցախյան պատերազմի ավարտից) – 2025 թ.

**1521 զոհ**



# ԲԱՆԱԿԸ Ե ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**1. Ապագաղութացում**

— Հայաստանը դարեր շարունակ սեփական բանակ չի ունեցել՝ բացառությամբ Առաջին Հանրապետության կարճ ժամանակահատվածից (1918–1920):

— Հայաստանի ազատ ընտրված խորհրդարանի (այն ժամանակ դեռ կոչվում էր Գերագույն Խորհուրդ) ընդունած առաջին որոշումներից մեկը հայ զինակոչիկներին Խորհրդային բանակ չուղարկելու մասին որոշումն էր:

— 1992 թ. հունվարի 28-ին Հայաստանի Կառավարությունն ընդունում է ՀՀ Պաշտպանության Նախարարությունը հիմնելու մասին որոշում՝ այսպիսով ստեղծելով Ազգային Բանակ ստեղծելու օրինական հիմքերը:

**2. Ժողովրդագրություն**

— Լեռնային Ղարաբաղի պատերազմների և հրադադարի խախտման հետևանքով զինծառայողների մահվան դեպքերը (1992–1994 թթ., 2016 թ., 2020 թ. և այլն)

— Զորակոչիկների թվի նվազում՝ ծնելիության նվազման պատճառով:

— Բանակում չծառայելու համար երիտասարդ տղամարդկանց շրջանում արտագաղթի ավելի բարձր ցուցանիշներ:

**3. Ժողովրդավարություն**

— Մարդու իրավունքների խախտումները և չկանոնակարգված հարաբերությունները բանակում:

— Ոչ մարտական իրավիճակներում զոհերի և այլ միջադեպերի տագնապալի թիվ:

— Բանակում մարդու իրավունքների մոնիտորինգ իրականացնող քաղաքացիական նախաձեռնություններ և խմբեր:

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԼԱԼԱ ԱՍԼԻԿՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լալա Ասլիկյան, **Բանակն իրականում նախաձեռնություն**

Լալա Ասլիկյանն իրավապաշտպան է: 1990-ականների վերջից նա շատ ակտիվ է քաղաքացիական հասարակության տարբեր նախաձեռնություններում՝ ուղղված քաղաքացիական և քաղաքական իրավունքների խթանմանը և պաշտպանությանը, այդ թվում՝ կանանց իրավունքների, բանակում ծառայող զինվորների իրավունքների, և այլն: Հարցազրույցի ժամանակ Լալան պատմում է Հայաստանում տարբեր քաղաքացիական նախաձեռնություններին ու շարժումներին իր մասնակցության մասին, մասնավորապես՝ «Բանակն իրականում» քաղաքացիական նախաձեռնության մասին: Նա կիսվում է ակտիվիզմի, քաղաքական դիրքորոշման, արժեքներին և այլնի մասին իր տեսակետներով և համոզմունքներով:

«Բանակն իրականում» նախաձեռնությունը ստեղծվել է 2011 թ.՝ արձագանքելով բանակում մարդու իրավունքների խախտումներին, ինքնասպանություններին և ոչ մարտական իրավիճակներում մահվան ելքով միջադեպերի մեծ թվին: Նախաձեռնության նպատակն է խթանել և պաշտպանել մարդու իրավունքները Հայաստանի զինված ուժերում, ինչպես նաև հասնել բանակում մարդու իրավունքների խախտման դեպքերի բացահայտմանն ու համապատասխան պատժի սահմանմանը: